

Հունիսի 6-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 26 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի թիվ 53 հիմնական դպրոցի տարածքում գտնվող «Նունե Եսայան» բարեգործական հասարակական կազմակերպության ուսումնական կենտրոնի կահավորում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Չափառ գյուղի նորակառույց դպրոցի կահավորում» ծրագրերը.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Երևանի N 1 տուն-ինտերնատ ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքի կառուցում» ծրագիրը.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ենթադրամաշնորհային ծրագիրը.

Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում» ծրագիրը.

Ամերիկայի Հայ օնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի շենքում վերելակի տեղադրում» ծրագիրը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Տպարանի շենքի տանիքի նորոգման աշխատանքների իրականացում», «Տպարանի շենքի տանիքի ջրհորդանների հակասառեցման համակրգերի տեղադրման աշխատանքների իրականացում», «Տպարանի շենքի տանիքի օդորակման և օդափոխության համակրգերի տեղադրման աշխատանքների իրականացում», «Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի եկեղեցու կառուցում», «Գյումրու հայրորդաց տան պայմանների բարելավում» և «Հաղարծին վանական համալիրի միաբանական շենքի կառուցում» ծրագրերը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տանիքի կառուցում» և «Պատուհանների և դռների տեղադրում» ծրագրերը.

«ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնքում կաթի հավաքման կետի և անասնապահների սենյակի կառուցման» ծրագիրը.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պատուհան դեպի աշխարհ» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի տրամադրում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի չորս համայնքներին», «Շինարարական նյութերի տրամադրում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի իննը համայնքներին», «Օգտագործված ցինկապատ խողովակների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Արտենի և Մաստարա համայնքներին», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի Կուտական համայնքի դպրոցի մասնակի վերանորոգում» , «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմարաշեն համայնքի ոռոգման ցանցի վերանորոգման համար տաշտակների մատակարարում» և «Շինարարական նյութերի տրամադրում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի յոթ համայնքներին», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին քաղաքի «Գարեգին Ավդալյանի» անվան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզադահլիճի հատակի վերանորոգում», «Շինարարական նյութերի տրամադրում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի վեց համայնքներին» և «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի տասնյոթ նախադպրոցական հաստատությունների և մանկապարտեզների մանկավարժների վերապատրաստում» ծրագրերը.

«Գլոբալ Էյդ Նեթվորք» գրանցված միություն հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Մրգավետ գյուղի մանկապարտեզի կահույքի տրամադրում» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: